




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.5
7-48

Պրոխատրներ բոլոր յերերների, միացեալ

Ապահովագրութիւնը միութիւնն և--միութիւնը՝ ուլժ

Գլուղացեալական սերլա

Պարտադիր ապահովագրութեամբ գյու-
ղացին կորցրածի մը մասն և գտնում.
Աամալոր ապահովագրութեամբ նա ամ-
բողջ կորցրածն և գտնում.
Հալախական ապահովագրութեամբ և-
ժան և ապահովում:

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կազմ. Ե. Վ. Փ.

Խմբ. Ս. Գաբամյան

300

1238-Ե

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՊԵՏԱՊԻ

1924 թ.

Յ Ե Ր Ե Վ Ս Ն

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1 MAR 2010

368.5
7-48

Գրեթատները բոլոր յերկրներէ, միացնէր
Ապահովագրութիւնը միութիւնն ե--միութիւնը՝ ույժ

Գյուղատնտեսական սերլա

300
1238-6

Պարտադիր ապահովագրութեամբ գյու-
ղացին կորցրածի մի մասն է գտնում.
Կամավար ապահովագրութեամբ նա ամ-
բողջ կորցրածն է գտնում.
Հավաքական ապահովագրութեամբ ե-
ման է ապահովում.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ N 2
ՎԵՐԱԿԱՆԱԳՐՈՒՄ
1924
1768

ՊԵՏԱԿԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ



Կազմ. Ե. Վ. Փ.

Խմբ. Ա. Գարամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՊԵՏԱԳՐԱՐԱՆ

1924

Յ Ե Դ Ե Վ Ա Ն

ԻՆՉՊԻՍԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ Ե ԿՆՏԱՐՈՒՄ ԱՅԺՄ ՊԵՏԱԳԸ

Պետապր ուզում ե ամեն բանում ոգնել
գյուղացիներին

Ներկայիս հետեվյալ ապահովագրություն-
ներն են, վոր կատարվում են կամա-
վոր կերպով:

1. Ցանքերի և տյգիների (բուսական
մշակույթների) ապահովագրություն կարկտից
(սա միաժամանակ պարտադիր ե):

2. Անասունների ապահովագրությունը՝
առատակելու, հիվանդություններից կոտորվելու,
գայլերի և այլ պատահարների դեմ:

3. Շենքերի, գյուղատնտեսական գործիք-
ների, կոոպերատիվ խանութների ապրանքնե-
րի, ջրաղացների, ծեփահանքերի, խոտի, հա-
ցահատիկների և այլն ապահովագրություն
վառվելուց, կորչելուց և գողանալուց:

4. Մարդկանց ապահովագրություն դրժ-
բախտ պատահարների (հիվանդության, հաշման-
դամության յեվ մահվան) դեպքերում:

Ցանկերը կառկսից սպահովագրելու դեմ

շատերը գանգատվում են, քնթմնթում են, ասելով թե իրենց շրջանում կարկուտ չի լինում, ել ինչո՞ւ դուր ծախս անենք ապահովագրելու համար: Այսպես ասողները շատ են սխալվում:

Նախ վոր վոչ վոր չի կարող առաջուց իմանալ, թե իր ցանքսերին կարկուտը խփելու յե թե վոչ:

Որինակները աչքի առաջ են: Այս տարի Հայաստանում այնպիսի գյուղերի ցանքսերը կարկտի տակ ընկան, վոր վաղուց նրա մասին չեյին լսել: Ռուսաստանում Սարատովի և Ցարիցինի նահանգներում սովորաբար կարկտի յերես շատ քիչ են տեսնում: Բայց 1923 թվին այնտեղ կարկուտը 100,000 դեսյադին ցանքս բոլորովին փչացրեց և շատ գյուղացիների կարողութունը վոչնչացրեց:

Յեկրորդ. յենթագրենք նույնիսկ, վոր մի տեղ մեկ-յերկու տարի կարկուտ չեն տեսնում: Դա չի նշանակում, վոր նրանք, այդ շրջանի գյուղացիները, պետք է ազատ մնան ապահովագրութունից: Չէ՛ վոր նրանց տված կոպեկներով Պետադը ոգնելու յե հարեվան գյուղին կամ շրջանին: Իսկ դրանից միթե նրանք ոգուտ չունին: Չէ՛ վոր բոլոր աշխատավոր գյուղացիների կուշտ ու հանգիստ լինելուց է կախված մեր յերկրի հաջողութունը, հարստութունը և զարգացումը:

Անասունների ապահովագրությունը նույն-չափ կարեւոր է, ինչպես ցանքսերին: Դրա վրա առանձին ուշադրություն պետք է դարձնեն գյուղացիք, վոր չգրկին իրենց կարողության ամենաթանգագին սյուներից մեկից:

Կռակից յեվ այլ պատանդներից գյուղատնտեսական գործքները, մեքենաները, կոռպերատիվ խանութները, ջրաղացները, շենքերը և այլն ապահովագրելով մենք փրկած կըլինենք ժողովրդական հարստության այս կարևոր մասերը: Դրանց մասին ամենից շատ պետք է մտածեն քաղաքի բնակչութունը, Պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկությունները: Հրդեհներ Հայաստանում, ճիշտ է, քիչ են լինում, բայց լինում են:

Մարդու կյանքի ապահովագրությունը մինչև այժմ մեր գյուղերում չի յեղել: Բայց սանչարի համար դա կարեւոր է, վորովհետև աշխատավոր գյուղացիների համար չկա հատուկ սոցիալական ապահովագրություն, ինչ վոր կա բանվորների և ծառայողների համար:

Պետք է գյուղացին մտածի իր մահվան կամ այլ դժբախտությունների՝ մասին և հոգ տանի, վոր այդպիսի բան պատահելիս իր ընտանիքը մի կտոր հացից զուրկ չմնայ: Այդ պատճառով նա պետք է աշխատի իր կյանքն ապահովագրել:

Ոռգովեցեի Պետապից և ապանովագբե-
ցեի ձեռ կյանքն ու ամբողջ կառողությունը:

ԻՆՉՈՒ ԿԱՍԱՐ ՊԱՐՏԱԳԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ- ԹՅՈՒՆԸ ՊԵՏԲ Ե ԼԻՆԻ

Ինչ կընշանակի՝ Պարտապիւր: Պարտապիւրը
այն է, վոր մի գործ ամենքն ել ուզեն չուզեն
պարտավոր են անել: Որինակ՝ գյուղի հասա-
րակութեան ժողովը վորոշում է դպրոցի շէնք
շինել, վոր յերեխաները սովորեն, ուսում առ-
նեն: Դրա համար նա վորոշում է, թե ամենքը
պարտավոր են իրենց արաբաներով քար կրել
և մի բան ել նվիրել: Վոչ վոր իրավունք չունի
ասելու, թե յես չեմ ուզում և չեմ անում:
Վորոշումը պարտապիւր է:

Ինչ ոգուտ ունի պարտապիւր վորոշումը:
Այն, վոր ամենքն ել այն գործի մեջ կաշ-
խատեն և հետո ամենքն ել միասին նրա ոգու-
տը կվայլեն: Յեթե դպրոց շինելու աշխատանք-
ները և դրա համար միջոցներ հավաքելը պար-
տապիւր չլինեն, այն ժամանակ շատերը, մա-
նավանդ ունեւորները, վոչինչ չեն անիլ և
չեն տալ հոգար կամքով, ուրիշներն ել նրանց
աչք տալով կըհրաժարվեն և դրանով գործը
կըքանդվի, գլուխ չի գալ:

«Ինչո՞ւ Մարկոսը պիտի գործ չանի, իսկ
յես նրա տեղ մենակ չարչարվեմ»,-- ահա թե
ինչ կըմտածի ամեն մեկը:

Յեթե գյուղում մի 4-5 հոգի եղպես
չասեն ել, այլ ուզենան այդ լավ գործը
մենակ իրենց ուժերով կատարել, միջնույն է,
նրանց ուժը չի պատիլ այդ բանն անելու և
վերջը-վերջը գյուղը կմնա առանց դպրոցի:

Ժողովրդական խոսքն ասում է, «Ձեռքը
ձեռք կը լվանա, յերկուսն երես կըլվան»:

Այն, ինչվոր չեն կարող անել 2-3 գյուղա-
ցի, կարող է անել վողջ գյուղը միացած:

Ինչ վոր չի կարող անել մեկ գյուղը մե-
նակ, կանեն հաճեման բոլոր գյուղերը ձեռք-
ձեռքի տված: Մի որինակ բերենք. ասենք 20
փթանոց մի գերան գյուղացին պետք է
դնի սայլի վրա: Նա ինքը մենակ իսկի տեղից
ել շարժել չի կարող գեղանը: Գալիս է մի
ուրիշը ոգնութեան, ելի բան գուրս չի գալիս:
Հավաքվում են 3-4 հոգի ել և հագիվ նրանք
կարողանում են գերանը տեղից շարժել: Բայց
յերբ վոր ոգնելու են գալիս 20-25 գյուղացի,
նրանք առանց գժվարութեան բարձրացնում
են գերանը, դնում ուսերին և տանում գցում
սայլի վրա:

Սրա համար է վոր ասում են, թե «գեղը

կանգնի գերանը կրկնորի»։ Սա նշանակում է վոր 20—25 հոգի գերանի տակը մտնելով, նրանցից ամեն մեկին բաժին է ընկնում 1 փ., իսկ մեկ փութը շատ հեշտ է բարձրացնել։

Ամբողջ ժողովրդի համար ոգտակար գործերը գերանի նման ծանր են. մի մարդ ամբողջ գործը մենակ կատարելու ուժ չունի, բայց բոլոր ժողովրդով մեկտեղ անելիս, ամեն մեկի բաժինը ավելի թեթեւ կըլինի։

Ապահովագրությունն էլ ամենքի համար ոգտակար, բայց ծանր գործ է։

Մենք իմացանք արդեն, վոր կարկուտը ամեն տարի կես միլիոն (500,000) ռուբլու վնաս է տալիս։

Յեթե այդ վնասը ծածկելու համար ուզենայինք 1000 հոգուց փող հավաքել, ամեն մեկը պետք է 500 ռուբլի տար, վոր ցավը հոգացվեր։ Յեթե 10,000 հոգուց վերցնեյինք, ամեն մեկին 50 ռ. բաժին կընկներ։ Իսկ յեթե ամբողջ Հայաստանի ժողովրդը, այսինքն 150,000 տան տնտեսությունը միանգամից կամավոր ապահովագրվեյին, ամեն մի տուն պիտի վճարեր ընդամենը 3 ռ. 50 կոպեկ։

Բայց չի կարելի հույս դնել, թե 150,000 տունը մի մարդու նման խոսք մեկ արած իրենց հոժար կամքով կըգրվեն ապահովագրու-

թյան և այդ փողերը առանց դժվարության կըտան։

Մանավանդ, վոր դեռ շատ կուլակներ և ունեւորներ կան, վորոնք վոչ թե միայն չեն ուզում իրենց կամքով այնպիսի գործի մեջ մտնել, վորից քրտսիքն էլ է ոգտվում, այլ նրանք դեռ ուրախ կըլինեն, վոր այդ քյասիքները ունեցածից ել զրկվեն և բոլորովին քաղցած մնան։

Այս ամենը ցույց են տալիս, վոր ապահովագրությունը պարտադիր անել ամբողջ գործի ոգուտն է պահանջում և նրանից շահ ունի ամբողջ ժողովուրդը, մանավանդ չունեւոր դասը։

Բանվորագյուղացիական Պետությունը շատ լավ գիտե իր գյուղացի ժողովրդի կարիքները։ Նա առանց հարուստների, կուլակների կամ սպեկուլյանտների քեֆը հարցնելու իր բանն է տեսնում և շարունակ լավ ու ոգտակար գործեր կազմակեպում։

Այդ լավ և ոգտակար գործերից մեկն էլ պարտադիր ապահովագրությունն է։

ԻՆՉՈՒ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ Ե ՊԵՏԳ

Պարտադիր ապահովագրութեան ժամանակ գյուղացուց ստանալիք գումարը նշանակելու համար պետք է աչքի առաջ ունենալ վճարողների մեծամասնութեան կարողութիւնը:

Փողովրդի մեծամասնութիւնը չքավոր կամ քիչ ունեւոր գյուղացիներն են: Ուրեմն ապավովճարները պետք է ցածր նշանակել, վոր նրանց ուժը պատի վճարելու:

Մյուս կողմից՝ պարտադիր ապահովագրութեան մեջ մասնակցում են ամենքը, հետեւաբար ամենքի գլխին յեկած պարտահարւերի, փորձանքների փնտաների ուսկը (պատասխանատւութիւնը) Պետապը պետք է վերցնի իր վրա: Այդ փնտաները մեկտեղ հաշված միշտ ել խոշոր են լինում:

Իսկ քիչ հավաքված փողով բոլոր փնտաները ծածկելը անկարելի յէ, դրա համար ել պարտադիր ապահովագրութեամբ կարելի յէ լինում փնտսի մի վորոշ մասը միայն բավարարել:

Այդպէս ել է: Այս տարի Պետապը մեկ դեսյատին ցորենի փնտսի համար տալիս եր 16 ր. 50 կ., մեկ դեսյատին բամբակին 25 ր., մեկ դեսյատին բրինձին 20 ր., մեկ դեսյատին այգու փշանալուն համար 30 ր.:

Իսկ ով չի հասկանում, վոր դա շատ քիչ է, դա գյուղացու ամբողջ ցավը չի դարմանում:

Պարտադիր ապահովագրութեան տվածը միայն մի փոքրիկ ոգնութիւն է, վոր գյուղացին ձեռը-ծոցը չմնա, վոր գոնէ իր սերմացուն հետ ոտանա և բոլորովին չքայքայվի:

Հաշված է, վոր այս տարի Պետապը պարտադիր ապահովագրութեամբ փնտսված գյուղացուն տվել է փնտսի իսկական արժեքի մեկ քառորդից պակաս մասը:

Ի՞նչ անել, վոր ամբողջ փնտսը հետ ստացվի:

Դրա համար պետք է, վոր գյուղացին իր ունեցածը ապահովագրել տա նաեւ կամավոր կերպով:

ԻՆՉ Ե ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դա այն է, վոր ամեն մի խելացի գյուղացի առում է ինքն իրեն. —

«Պարտադիր ապահովագրութիւնը ինձ զեռ բոլոր փնտաներից չի աղասում: Նա ենքան է տալիս, վոր գոնէ սերմացուն չկորցնեմ: Նա 45 կամ 53 կոպ. է վերցնում և զրա դիմաց 16 ր. 50 կ. տալիս: Ավելի լավ է մեկ դեսյատին ցորենը ապահովագրել տամ 50 բուբով: Թէ իմ բախտից կարկուտ չեկավ, հալալ լինի, թող Պետապը եղ փողերով ուրիշին ոգնի: Իսկ

Թե իմ քոռ բախտից կարկուտը խփեց, յես իմ 50 բուրլին կստանամ և յերեխեքս սոված չեն մնա ձմեռը»:

Այսպիսի խելացի գյուղացիներ այս տարի յեղան: Ստեփանավանի (Ջալալ ողլու) շրջանում 1300 տնտեսութուն, բացի պարտադիրից, կամավոր կերպով ել ապահովագրել ավին իրենց ցանքսերը:

Եվ նրանք չփոշմանեցին: Վորովհետև շատերի ցանքսերը կարկուտը ավեց և նրանք շատ ավելի ստացան, քան իրենց հարեւանները:

Ցանքսերը և այգիները կամավոր ապահովագրել կարելի չե այնքան գումարով, վորքան նրանց բերքի իսկական արժեքն է:

Անասունները կարելի չե ապահովագրել 60—100—150 բուրլով, նայելով նրանց տեսակին և տեղի վրա յեղած գներին: Իսկ ցեղական անասունները նույնիսկ մինչև 1000 ը.

Շատերը չեն հասկանում կամավոր ապահովագրության ոգուտը և իրենց ունեցածը չեն ապահովագրում վոչ թե նրա համար, վոր փող չունեն, քյասիբ են, այլ վորովհետև չեն ուզում հավատալ և իրենց շահը պաշտպանել:

Վորպեսզի կամավոր ապահովագրությունից ել ամենքը կարողանան ոգտվել, Պետապը գնալով պակասեցնում է վճարները և ավելացնում ապահովագները:

Անցյալ տարի մեկ անասուն ապահովագրելու համար գյուղացին պետք է նրա արժեքի ամեն մի հարյուր բուրլու դիմաց վճարեր 6 ը 50 կ: Այսինքն 6 և կես տոկոս: Այս տարի մտադրություն կա այդ գումարը իջեցնել:

Գյուղացիների դյուրության համար հաստատված է ՊԱՐԶ Զեվի ապահովագրություն: Յերկար ու բարակ ձեվականություններ, չարչարանքներ չկան: Բավական է, վոր գյուղացին հայտնի, թե ուզում է իր անասունը կամ ցանքսը ապահովագրել տալ, այդ որվանից արգեն Պետապը պատասխանատու չե դանում, թեկուզ ապահովավճարն ել դեռ մտցրած չլինի:

Կամավոր ապահովագրությունը միացած պարտադիր ապահովագրության հետ տալիս է գյուղացուն ավելի մեծ սեր դեպի իր աշխատանքը և հավատք, վոր այդ աշխատանքը գուր չի կորչելու բնության պատահարներից և դանազան դժբաղդ դեպքերից:

ԻՆՉ Ե ՀԱՎԱԲԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կամավոր ապահովագրության համար ամեն մի գյուղացի առանձին-առանձին պիտի նույն ժամանակը կորցնի, նույն շորչարանքը քաշի: Ամեն մի գյուղացու ցանքսը կամ անասունը պետք է ջուկ-ջուկ դնահատվի, ամեն մեկի հա-

ամար ջուկ թղթեր գրվեն: Մի խոսքով, յեթե մի գյուղում 50 հոգի ուղում են իրենց ունեցածը կամավոր ապահովադրել, գործակալը միևնույն աշխատանքը 50 անգամ ջուկ- ջուկ պիտի կատարի և անազին ժամանակ կորցնի:

Շատ անգամ ել ապահովագրողը ուշանում է, ձգձգվում է, վորովհետև գործակալը ուրիշ գյուղերում միևնույն գործով զբաղված է լինում և չի կարողանում շուտ գալ:

Իսկ ապահովագրության համար ամեն մի արը, ամեն մի ժամը արժեք ունի, վորորհետև վոչ վոր չգիտես, թե փորձանքը յերբ կարող է գալ:

Այս անհարմարությունն ել մեջտեղից վեր- ցնելու համար Պետապը կատարում է ՀԱՎԱ- ԲԱԿԱՆ ապահովագրություն:

Ի՞նչ ասել է հավաքակալն.

Յերբ 5—10—15—100 գյուղացիներ հա- մաձայնվում են իրար հետ միասին գնալ անտառ փայտ կտրելու և հետո իրար մեջ բաժանելու, դա հավաքական աշխատանք է:

Յերբ նույն ձևով մի խումբ մարդիկ վորո- շում են իրենց ունեցած անասունները և գու- թանները մեկ տեղ բերած իրենց արտերը միա- ցած ուժերով, բոլորը միասին աշխատելով ցա- նել կամ հնձել, դա հավաքական ցանքս կամ հունձ է կոչվում:

Նույնը և ապահովագրության մեջ: Յերբ վոր մի խումբ գյուղացիներ, կամ մեկ ամբողջ գյուղ խոսք-մեկ արած ապահովագրել են տա- լիս իրենց ցանքսերը կամ անասունները, փոխա- նակ այդ բանը ջուկ- ջուկ անելու, դա կոչվում է ՀԱՎԱԲԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

Ի՞նչ ոգուտ է տալիս այդ ձևի ապահովա- գրությունը: Նախ վոր ամեն մեկը առանձին — առանձին իր գործից չի կտրվում գործակալի մոտ գնալու և ապահովագրության գործով ժա- մանակ չի կորցնում: Բոլորը միացած կարող են 1-2 ներկայացուցիչ ընտրել, վոր այդ գոր- ծով պարապին, իսկ մյուսները կը շարունակեն իրենց աշխատանքները:

Յեկրորդ ոգուտն այն է, վոր Պետապը հավաքական ապահովագրողներին մի քանի իրավունքներ է տալիս: Ինչ վոր առանձին մարդկանց չի արվում:

Որինակ: Յեթե մենակ մի մարդ է իր ա- նասունն ապահովագրել տալիս, 1) Պետապը հի- վանդոտ և նիհար անասունները չի ընդունում և նրանց ռիսկը իր վրա չի ածնում: 2) Պետապը պատասխանատու չէ լինում և վճարում է միայն այն անասունի համար, վորը ապահովա- գրելուց ամենաքիչը քսան ու հետո չէ սատ- կում: 3) Փողը մեկ անգամից են գլխից են վճարում:

Իսկ հավաքական ապահովագրութեան ժա-
մանակ Պետապը ապահովագրում է նաև
նիհար և հիվանդոտ անասունները (յեթե, իհար-
կե: վտանգավոր հիվանդութիւնն է): Նա
պատասխանատու չէ դառնում և վճարում է
ապահովագրութիւնից թեկուզ մեկ որ հետո
սատկածի փետուր: Ապահովավճարից 10 0/0 (1
րուբլուց 10 կոպ.) զեղջ է անում, (իսկ մեկ
րուբլուց 10 կոպ. շահվելը քիչ ոգուտ է):
Կամ, առանց այդ զեղջի, ապահովավճարը կարե-
լի չէ վճարել մաս-մաս, կեսը սկիւբից և կեսը
մեկ ամսից հետո:

Յեւ ուրիշ մի շարք դյուրութիւններ:

(Ավելի մանրամասն տեղեկութիւններ և
բացատրութիւններ հարցրեք գործակալից, նա
ձեզ կասի):

Տեսնում եք, վոր հավաքական (գյուղով
մեկ) ապահովագրութիւնը ամենալավ և ձեռն-
տու ձեցիլն է:

Գյուղացի-ապահովագրվողներ, ապահովա-
գրեցեք ձեր ունեցածը հավաքական կերպով:

**ԻՆՉ Ե ՎԵՐՑՆՈՒՄ ՊԵՏԱՊԵ ԳՅՈՒՂԱՅՈՒՑ ՅԵՎ
ԻՆՉ Ե ՏՍԼԻՍ ՆՐԱՆ**

Այս հարցի մասին տես «Ապահովագրողի»
Գրադարան № 3 զրբույթը:



«Ազգային գրադարան»



NL0213874

ԳԻՆՆ Ե՛ 6 ԿՈՊ.ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅՊԵՏԱՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ և Պետական Ապահովագրությունը: 5 կ.
 2. Պետական Ապահովագրության տեսակները: 5 »
 3. Պետապը ի՞նչ և վերցնում գյուղացուց և ի՞նչ
և տալիս նրան: 5 »
 4. Ի՞նչպես պետք և վերաբերվել Պետապին:
Ապահովագրության գլխավոր կանոններ 8 »
 5. Հայպետապը ի՞նչ և արել և՛ ի՞նչ ունի անելու
գյուղում: 6 »
-